

Կ-990-18.04.2016,13.10.2016-ՊԻ-010/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել *189.1* հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված *189.1*. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը, կամ ղեկավարելը

1. Ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները՝

1) որոնց արդյունքում ֆինանսական բուրգում ներգրավվել է խոշոր չափերով գումար կամ գույք,

2) որոնք անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառել են խոշոր չափի վնաս,

3) որոնք կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ազատազրկմամբ երկուսից հինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները՝

1) որոնց արդյունքում ֆինանսական բուրգում ներգրավվել է առանձնապես խոշոր չափերով գումար կամ գույք,

2) որոնք անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառել են առանձնապես խոշոր չափի վնաս,

3) որոնք կատարվել են կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի իմաստով ֆինանսական բուրգը գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն է (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության), որով գույք ներդրող կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին՝ առանց նշված գույքը իրական ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության:

5. Սույն հոդվածում խոշոր չափ և խոշոր գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ և առանձնապես խոշոր գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը:

6. Սույն հոդվածում գույքային վնասի հաշվարկման համար հիմք է հանդիսանում բուրգում ներգրավված բոլոր անձանց, այդ թվում՝ կազմակերպություններին, ինչպես նաև պետությանը պատճառված միասնական վնասը:

7. Ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը ստեղծող, կազմակերպող կամ ղեկավարող անձը ազատվում է սույն հոդվածով սահմանված քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին, նպաստել է ֆինանսական բուրգի գործունեության խափանմանը և հատուցել է ֆինանսական բուրգի՝ իր կողմից ստեղծված, կազմակերպված կամ ղեկավարվող մասի գործունեության հետևանքով պատճառված վնասները, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

**«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների**

Հ/հ	Առաջարկության հեղինակ	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի դիրքորոշումը
1.	ՀՀ կառավարություն	«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	<p>Համաձայն լրացվող 188<sup>2</sup>-րդ հոդվածի առաջին մասի ձևակերպման՝ հանցագործության օբյեկտիվ կողմը երկրնտրելի է, որը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ֆինանսական բուրգ կամ դրա մի մասը <b>ստեղծելը.</b></li> <li>✓ Ֆինանսական բուրգ կամ դրա մի մասը <b>կազմակերպելը.</b></li> <li>✓ Ֆինանսական բուրգ կամ դրա մի մասը <b>ղեկավարելը:</b></li> </ul> <p>Ինչ վերաբերում է հանցակազմի օբյեկտիվ կողմի նկարագրության մեջ տեղ գտած «(...) գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն իրականացնելը (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեությանը), որով գույք ներդրող</p>	<p>Ընդունելի է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

			<p>կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին» ձևակերպմանը, ապա այն միանշանակ ոչ թե հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է, այլ «ֆինանսական բուրգ» հասկացության նկարագրությունը:</p> <p>Հետևաբար, առաջարկում ենք <i>հանցակազմի օբյեկտիվ կողմի նկարագրությունը սահմանափակել միայն օրենքով նախատեսված երեք գործողությունների կատարմամբ</i>, իսկ «ֆինանսական բուրգ» հասկացության բացատրությունը սահմանել միևնույն հոդվածի մեկ այլ՝ բացատրական մասով: Նույն տրամաբանությունն է ընկած նաև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 311<sup>1</sup>-րդ, 356-րդ հոդվածների կառուցվածքի հիմքում, որոնցում առանձին մասով (համապատասխանաբար՝ 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով) բացատրվում են քրեական օրենսգրքի իմաստով համապատասխանաբար՝ պաշտոնատար անձի, հանրային ծառայողների, հրամանատարի հասկացությունները:</p>	
			<p>Լրացվող 188<sup>2</sup>-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսվում է խրախուսական նորմ,</p>	<p>Ընդունելի է:</p>

		<p>համաձայն որի՝ ֆինանսական բուրգ կամ դրա մի մասը ստեղծող, կազմակերպող կամ ղեկավարող անձն ազատվում է <b>188<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասով</b> սահմանված քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և նպաստել ֆինանսական բուրգի գործունեության խափանմանը:</p> <p>Թերևս, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի գործում կարևոր նշանակություն կունենա այս խրախուսական նորմի առկայությունը, սակայն, ընդհանուր առմամբ, անհասկանալի է՝ ինչ տրամաբանություն է ընկած կամովին ներկայացող անձի՝ միայն <b>հասարակ հանցակազմով</b> նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքում՝ առանց նախատեսելու նաև <b>որակյալ հանցակազմերը</b>: <i>Կարծում ենք, խրախուսական նորմի լիարժեք իրացումն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է կամովին ներկայացող անձին ազատել ինչպես հասարակ, այնպես էլ որակյալ հանցակազմերով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Նախ, այս հանգամանքն էական նշանակություն կունենա նաև այն ֆինանսական բուրգերի բացահայտման գործում, որոնց արդյունքում առավել մեծ գումար է</i></p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես հոդվածի 1-ին, այնպես էլ 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքների համար խրախուսական նորմի կիրառման դեպքում առաջանում է պատճառված վնասի հատուցման խնդիր, նախատեսվել է խրախուսական նորմի գործողության լրացուցիչ պայման, այն է՝ պատճառված վնասի հատուցում:</p>
--	--	---	---

			<p>ներգրավվել կամ անձանց, կազմակերպություններին կամ պետությանն առավել խոշոր վնաս է պատճառվել, ինչպես նաև եթե դրանք ստեղծվել, կազմակերպվել կամ ղեկավարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով կամ կազմակերպված խմբի կողմից: Հակառակ դեպքում, խրախուսական նորմը կկորցնի իր տրամաբանությունը, քանի որ կամովին ներկայացող անձը որոշակի մտահոգություններ կարող է ունենալ քրեական հետապնդման մարմիններին հանցագործության մասին հայտնելիս կամ ֆինանսական բուրգի գործունեության խափանմանը նպաստելիս: Ի վերջո, ՀՀ քրեական օրենսգրքում առկա բոլոր խրախուսական նորմերն ազատում են ինչպես հասարակ, այնպես էլ որակյալ հանցակազմով նախատեսված պատասխանատվությունից:</p>	
2.	Պատգամավոր Գ. Զհանգիրյան (բանավոր ներկայացված առաջարկություններ)	«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:	Անհրաժեշտ է լրացվող հոդվածը ներմուծել ոչ թե 188 <sup>2</sup> ցուցիչով, այլ 189 <sup>1</sup> ցուցիչով, քանի որ այն իր բնույթով ավելի մոտ է կեղծ ձեռնարկատիրությանը:	Ընդունելի է:  Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:

				<p>Համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում:</p>
			<p>Անհրաժեշտ է ֆինանսական բուրգի հասկացությունը համապատասխանեցնել Ղազախստանի քրեական օրենսգրքով ֆինանսական բուրգին տրվող հասկացությանը: Մասնավորապես, հասկացության վերջում լրացնել «առանց նշված գույքի ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության» արտահայտությունը, որպեսզի առավել հստակ լինի ցանցային մարկետինգի, վաշխառության տարբերությունը առաջարկվող հանցակազմից:</p>	<p>Ընդունելի է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
			<p>Անհրաժեշտ է լրացվող հոդվածի 6-րդ մասով սահմանված խրախուսական նորմը տարածել նաև հոդվածի որակյալ հանցակազմերի վրա՝ հաշվի առնելով այն, որ 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում են շատ ավելի վտանգավոր հանցատեսակներ, վնասներն ավելի մեծ են և այս պարագայում խրախուսական</p>	<p>Ընդունելի է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Միևնույն ժամանակ, հաշվի</p>

			<p>նորմի տարածումը ամբողջ հողվածի վրա կնպաստի իրավապահ մարմինների կողմից հանցագործության քննությանը:</p>	<p>առնելով այն հանգամանքը, որ, ինչպես հողվածի 1-ին, այնպես էլ 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքների համար խրախուսական նորմի կիրառման դեպքում առաջանում է պատճառված վնասի հատուցման խնդիր, նախատեսվել է խրախուսական նորմի գործողության լրացուցիչ պայման, այն է՝ պատճառված վնասի հատուցում:</p>
--	--	--	--	--